

«ԱՐԱՐԱՏ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԸ

Մ. Չ. ՄԵԻՔԱՐՅԱՆ

«Արարատ» շաբաթաթերթը XIX դ. կեսերի արևելահայ իրականության մեջ ծավալված մտավոր զարթոնքի ծնունդն ու արգասիքն էր, որն իր հերթին նոր թափ ու բովանդակություն էր հաղորդում 50-ական թթ. հայ մտավորականության գործունեությանը: «Արարատը» խմբագրում էր Գաբրիել Պատկանյանը:

Գ. Պատկանյանը ծնվել է Թիֆլիսում, 1802 թ., սովորել նախ հոր՝ նշանավոր հայագետ և մանկավարժ Սերովբե Պատկանյանի դպրոցում, Աստրախանում, ապա տեղի ուսական գիմնազիայում: 1827 թ. Աստրախանից փոխադրվում է նոր Նախիջևան, որտեղ բացում է իր մասնավոր դպրոցը: Այստեղ, 1837—1845 թթ. սովորել են Ռ. Պատկանյանը և Միքայել Նալբանդյանը: Աշ. Հովհաննիսյանը Գ. Պատկանյանին համարում է անցյալ դարի 40—50-ական թթ. «ոչ միայն Նախիջևանի, այլև ամբողջ հայ մտավորականության աչքի ընկնող, բազմատեղյակ ու խոհուն ներկայացուցիչներից մեկը»¹:

Ռուսաստանի հետ Անդրկովկասի միանալուց հետո հայ հասարակությունը լայն հնարավորություններ ստացավ զարկ տալու ազգային լուսավորությանն ու մշակույթին: Թիֆլիսում գործում էին ներսիսյան դպրոցը, Գ. Պատկանյանի պանսիոնը, 1846 թ. հրատարակվում էր «Կովկաս» թերթը, Խ. Աբովյանը պաշտոնական գործերով Երևանից հաճախակի գալիս էր Թիֆլիս, թղթակցում էր «Կովկասին» և հանդիպումներ ունենում տեղի մտավորականության հետ: Նա նամակազրական կապի մեջ էր Կազանում պաշտոնավարող հայ լուսավորիչ Նազարյանի հետ, որն սկսած 1844 թ., պաշտոնական շրջաններում և իր աշխատություններում արծարծում էր հայերեն լեզվով թերթ հրատարակելու անհրաժեշտությունը:

Գ. Պատկանյանը ձեռնամուխ եղավ լրագրական գործունեության, երբ իբրև «Կովկասի» շրջանակի գործիչներից մեկը՝ խմբագրական աշխատանքի բավականաչափ փորձ էր ձեռք բերել²: 1847 թ. «Կովկասը» դադարում է հրատարակվել և Պատկանյանը, որ նկատել էր ժողովրդի հետաքրքրությունը դեպի լրագիրը, վճռում է աշխարհաբար լեզվով մի պարբերական հիմնադրել: Նա հստակորեն գիտակցում էր, որ «Կովկասը» խափանվեց, որովհետև «չէր աշխարհաբար, և չէր ամենեցուն հասկանալի»:

¹ Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 24:

² Ալ. Երիցյանը հետաքրքրական մանրամասներ է պատմում «Կովկաս» և «Кавказ» թերթերի միջև ծայր առած մի բանավեճի մասին, որն ընթացել է Ն. Բոգոմոլովի և Գ. Պատկանյանի միջև: Կառավարության որոշմամբ Պատկանյանը հարյուր ուրբի տուգանք է վճարում, իսկ «Կովկասը» կարճ ժամանակից դադարեցվում է («Արձագանք», 1889, № 15, «Տեր-Գաբրիել Պատկանյան» հոդվածը):

1850 թ. Գ. Պատկանյանը դիմում է փոխարքայությանը՝ սեփական տպարան և նոր լրագիր հիմնադրելու խնդրով։ Ստանալով թույլտվություն, նա նոր տպարանից բերած սեփական տառերով հիմնադրում է տպարան և 1850 թ սեպտեմբերին լույս է տեսնում «Արարատ» թերթի առաջին համարը, որն ընթերցողներին դիմում էր նրանց հասկանալի աշխարհաբար լեզվով։

«Արարատի» էջերում քննարկվում էին ազգային զարթոնքին բնորոշ խնդիրներ, բարձրացվում դրանք ապահովող գործնական պահանջներ։ Այն է՝ նոր, գրական աշխարհաբարի մշակման հարցը, աշխարհիկ գրականության և բանասիրության զարգացման պահանջը, դպրոցական ցանցի ստեղծման խնդիրը, բնական գիտությունների պրոպագանդումը, պայքարը նախապաշարունակների և սնահավատության դեմ։ Վերջին տեղում չէր գտնվում նաև անցյալի պատմական դասերով ազդը դաստիարակելու խմբագրի մտահոգությունը։

Գ. Պատկանյանը երբեմն էլ տեղ էր տալիս այնպիսի նյութերի, որոնց միջոցով պրոպագանդում էր քրիստոնեական բարոյականության նորմերը։ Նա՝ ազգային-պահպանողական իր աշխարհայացքի բերումով լուսավորական գործունեությունը ծառայեցնելով հայությանը, ազգ հասկացողությունն ընդունում էր իբրև միատարր և համերաշխ մի զանգված, որին խորթ են դասակարգային հակասությունները։

«Արարատի» խմբագրին մեծապես հուզում էր արևելահայության կրթական վիճակը։ Նա ծրագրում էր, ուժերը ներածին չափ, լուսավորել հայությանը, մասնավորապես ժողովրդական այն զանգվածներին, որոնք սաստիկ անգրագիտության մեջ էին»։ Վկայակոչելով արևմտահայերին, որոնք Պոլսում և Զմյուռնիայում հիմնադրել էին տպարաններ և պարբերականներ, Պատկանյանը փորձում է արևելահայերի մեջ ևս վառել նախանձախնդրության կրակը. «Պոլսո հայերն կամ Իզմիրո հայերն՝ տաճկաց ձեռի մեջ՝ որ այսօրան կարողացան անել և լինել, մեր կողմի հայերն ուսաց քաղցր հովանավորության ներքո ինչի՞ չեն կարող»³։ Հայ մտավորականները մեծ ջանքեր պետք է ներդնեն՝ արևելահայերին ևս կապելու գրականության և մամուլի հետ, գրում էր «Արարատի» խմբագիրը, և քանի որ նա ժողովրդին կրթելու հիմնական ձևերից մեկը համարում էր մամուլը, ապա իր շաբաթաթերթով առաջին օրինակն էր տալիս ժամանակակիցներին։

«Արարատը» ոչ լրագիր է, ոչ ամսագիր, հայտարարում է խմբագիրը. քանի որ թերթը բացառիկ խնդիր ունի կատարելու հայության մեջ (ամեր միտքն այն է, որ մեր ազգը կարգա»), ուստի այն հրատարակվում է իբրև ընթերցանության ժողովածու։ Պատկանյանը չի փորձում իր թերթը հրատարակել «Բազմավէպի» կամ «Արշալույս Արարատյանի» ծրագրով, որպեսզի խզում չառաջանա ընթերցողների մակարդակի և «Արարատի» միջև կամ, ինչպես ինքն է գրում, որպեսզի «ասողքն» չլինեն խուժ և «լսողքն» դուժ։

Պատկանյանի մոտակա ծրագիրն այն էր, որ թերթի ընթերցողները, որոնք դեռևս կարողություն չունեին «ծանր-ծանր առարկայից վերա բան կարդալով» օգուտ ստանալը սկսեն տարրական ուսումից։ Ուստի և նա հայտարարում է. «սորա միջի նյութերն ո՛չ թե մեր սակավաթիվ ուսելոց զարմացնելու համար են, այլ բազմաթիվ չուսելոց համար, որոնց հարկավոր է

պարզ լեզու և այն լեզվով գրվին թեթև բաներ, որոնց մեջ նախընտիր են՝ առականեր, պատմություններ, երգեր, բնական վիպասանություն պատկանյալ հատվածներ, որ մեր ընթերցողաց ճաշակին և կարողությանն հարմար և դյուրընկալ լինին»⁴:

Դժվար չէ նկատել, որ Գաբրիել Պատկանյանը շարունակում էր խաչատուր Աբովյանի ավանդները: «Պարապ վախտի խաղալիք» գրքի առաջաբանում Աբովյանն իր խնդիրն էր համարում «էնպես մեկ բան գրել», որ «մեր խալիսի սրտովն ըլի»: Այն, որ ժողովուրդը կապված չէր գրքի հետ, Աբովյանը բացատրում էր նրանով, որ գիրքը նրա սրտովը չէ, Եվ ահա նա գրում է մի գիրք՝ ժողովուրդի խոսակցական լեզվով, որի բովանդակությունը նույնպես «խալիսի խոսացած բաներից էր» (առականեր, բայաթիներ, զվարճալի պատմություններ և այլն):

Պատկանյանը Աբովյանի ավանդներն էր իրականացնում նաև անվերապահորեն դիմելով աշխարհաբար լեզվին⁵: Նա ոչ միայն «Արարատում» տպագրում էր աշխարհաբարով գրված բազմապիսի նյութեր, այլև զետեղում էր տեսական հոդվածներ՝ նվիրված այդ հարցի քննությանը: Այս առումով հետաքրքրական է Ռաֆայել Պատկանյանի «Ազգասիրական հանդեսը» հոդվածը, որտեղ նա քննության է առնում աշխարհաբար լեզվով գրելու անհրաժեշտության հարցը: Լազարյան ճեմարանի երիտասարդ շրջանավարտը, որ եկել էր Թիֆլիս խմբագրական աշխատանքներում հորն օգնելու, ձեռնոց է նետում ոմանց այն «եռանդամությունը», որով նրանք դիմադրում էին աշխարհաբարի զարգացման համար տարվող ջանքերին, դրա մեջ տեսնելով գրաբարի կորսության վտանգը: Բայց չեն մտածում այդ անձինք, գրում է Պատկանյան-որդին, որ մշակված և բոլորին հասկանալի աշխարհաբարը հայերին ավելի կմոտեցնի գրաբարին, քան գավառաբարառները: Ոչինչ, որ Ռ. Պատկանյանն սկզբունքորեն դեռևս չէր ընդունում գրաբարի վերջնական պարտության հարցը (այդ տարիներին ուրիշ կերպ չէր էլ կարող լինել), կարևորն այն է, թե նա որպիսի զգաստ հայացքով է գիտել իրերի իսկական դրությունը: Գրաբարը խորթ է հայ մանուկին և օտար նրան այնպես, գրում է նա, ինչպես մեռած լեզուները, ուստի՝ «եթե մեկ հայ մանուկ սկսում է հայոց գրաբար լեզուն սովորիլ, նույն աշխատությունն է քաշում, ինչ որ պիտի քաշե մեկ օտար մեռյալ լեզու սովորելու համար, զոր օրինակ, քաղդեացվոց, արաբացվոց, սանսկրիտացվոց և այլն»⁶:

Քանի որ աշխարհիկ գրականությունը դեռևս ստեղծման պրոցեսում էր, Ռ. Պատկանյանը խորհուրդ է տալիս հետևողականորեն կարդալ մամուլի հայ օրգանները և ընտելանալ դրանց լեզվին: Նա հույս է հայտնում, որ հայ թերթերը ոչ միայն կկարողանան ընթերցանության պատշաճ նյութ տալ, այլև

⁴ Նույն տեղում, էջ 216:

⁵ Աշոտ Հովհաննիսյանն ընդգծել է Պատկանյանի և Աբովյանի կապերը՝ հին խալիսյական դպրոցների դեմ մղած նրանց պայքարի, դասավանդման սկզբունքների և աշխարհաբարի պաշտպանության բնագավառում (Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ.), Բանասեր Շ. Նազարյանը նշել է Պատկանյանի և Աբովյանի մանկավարժական հայացքներում նկատված ընդհանրությունների մասին (Շ. Նազարյան, Գաբրիել Պատկանյանի կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3):

⁶ «Արարատ», 1851, № 18, էջ 276:

ընթերցողներին կհրամցեն «ընտանեկան խոսակցության համար մեկ պարզ, ընտիր, մաքրած և հարթած հայերեն լեզուն»⁷:

«Արարատում» ժամանակին տպագրվել են և գրաբար որոշ բանաստեղծություններ, բայց դա բնորոշ չէր թերթի ուղղությանը և միայն տուրք էր անցյալի սովորություն, որից, ինչպես գրում է Ն. Շահազիզը, «չէր կարելի իսկույն և միանգամայն վերջնականապես բաժանվել և խզել ժառանգության կապերը: Այդտեղ գլխավորն այն էր, որ աշխարհաբարին լայն ասպարեզ էր տրված, ճանաչված էր նորա իրավունքը»⁸:

Գաբրիել Պատկանյանի ժողովրդաստական գործունեությունը նրան հնարավորություն է տալիս ինչ-որ չափով իրականացնել իր մեծ ժամանակակցի՝ Աբովյանի լուսավորական ավանդները: Նա թերթի առաջին համարում զետեղել է մի նամակ, որն իբր ինքը ստացել էր ընթերցողներից, ի պատասխան «Արարատի» հրատարակության ծանուցման: Նամակի ուշադիր քննությունը ցույց է տալիս, սակայն, որ դա ծրագրային մի հոդված է, կազմված խմբագրության կողմից և կանխանշում է թերթի ուղղությունն ու քննարկելիք հարցերը: Այսպես, օրինակ՝ «նամակագիրը» ամենից առաջ խորհուրդ է տալիս «Արարատը» հրատարակել աշխարհիկ լեզվով («մեզ համար դրա լեզուն է հարկավոր, չէ թե խելքը, դրա պարզ խոսակցությունն է հարկավոր, չէ թե դրա խմաստությունը»): Այնուհետև առաջարկում է, որ սկզբնական շրջանում ղեկ պարզ, ժողովրդական «խաղեր կանչեն, առականեր ու առասպելներ ասեն»: Նամակի հեղինակը խմբագրին խորհուրդ է տալիս ընթերցողներին ծանոթացնել ռուսական պետական օրենքներին, տպագրել գիտա-հանրամատչելի զրույցներ («թե կրակը ինչի՞ է էրում. ցրտիցը ինչի՞՝ ենք մրսում. կարկուտն ու կայծակը ինչպե՞ս են ծնում և այլն»)՝⁹:

Մեր կարծիքով, Պատկանյանը, այսպես կոչված, հրահանգչական այս նամակը կազմել էր այն ոգով, ասեք դա գրում էր խաչատուր Աբովյանը, որի անունը 1850 թ. նա, հավանաբար, չէր ուզում նշել: Լիովին համերաշխելով Աբովյանի լուսավորական ծրագրերին, Պատկանյանը վճռել էր շարունակել նրա թողած գործը և զարմանալի չէ, որ «Արարատի» առաջին համարը բացել է նրան պատշաճող խորհուրդներով: Մի շարք կողմերով հետաքրքրական այդ նամակն ավարտվում է հետևյալ տողերով. «Թե ավարդդ չի գա, մի խնայիր օրհնանքդ ինձ՝ Թիֆլիզեցի խաչիկ Հավերժյանի համար»¹⁰: Խմբագիրը հրապարակելով այս փաստաթուղթը, առիթ է ստեղծում՝ իր թերթի առաջին համարում օրհնանքով հիշելու արդեն հավերժացած իր մեծ նախորդին, ի. Աբովյանին, և սերունդներին հայտնում է իր հավատամքը, հավատարմությունը նրա ավանդներին, որոնք, ինչպես և դրանց հեղինակը, նրա խորին համազգամբ պետք է ապրեն և անվերջ ծառայեն:

Ինչպես ցույց է տալիս «Արարատի» հավաքածուն, Պատկանյանը հետագայում ղեկավարվել է վերը հիշված ծրագրով:

Գրեթե յուրաքանչյուր համարում Պատկանյանը զետեղել է գեղարվեստական արձակի նմուշներ և բանաստեղծություններ: «Արարատի» համար

7 Նույն տեղում:

8 «Լուսա», 1909, № 4, էջ 41:

9 «Արարատ», 1850, № 1, էջ 5:

10 Նույն տեղում:

խիստ հատկանշական է, որ այդ գործերն իրենց ոգով ներդաշնակում էին շաբաթաթերթի բարոյա-դաստիարակչական հիմնական ուղղությանը: Այսինքն եթե բոլոր բանաստեղծություններն ստորագրված էին, արձակ գործերը տպագրվում էին առանց հեղինակի անունը հիշատակելու: Միանգամայն հավանական է, որ դրանց մեծ մասը պատկանում էր Պատկանյանի գրչին: Թարգմանական գործերի հեղինակները նույնպես, փոքր բացառությամբ, չեն նշվել:

Գեղարվեստական արձակի լավագույն նմուշներից է Կիլիկյան հայկական թագավորության ժամանակներին նվիրված «Ո՛չ ոք չէ՛ կարող նախասահմանության կարգը փոխել» վիպակը, որը նվիրված է Լևոնի որդի Թորոսի կյանքի դյուցազնական դրվագներին¹¹: Այս վիպակը գրված է աշխարհաբար, ունի սյուժետային ճարտար կառուցվածք, և մեր աշխարհիկ աղքատիկ գրականության արշալույսին, անկասկած, կատարել է իր պատմական դերը՝ ընթերցանության նյութ տալով Կովկասի հայերին, և նրանց մեջ բորբոքելով հայրենիքի սերը: Բարոյախրատական իր միտվածությամբ նկատելի երևույթ է «Հնարագիտություն Սմբատ հայոց թագավորի կնոջ՝ Մարիամ թագուհույն» պատմվածքը¹²: Խոհական, փիլիսոփայական ոգով են տոգորված եվրոպական ժողովուրդների բանահյուսությունից և գրականությունից վերցված պատմվածքների սյուժեները: Այս շարքի գործերում դրվատվել են բարեպաշտության, ծնողասիրության, մարդասիրության գաղափարներն ու այլ առաքինություններ: Նույն նպատակին են ծառայել և երգիծական մանրուպատումները, որոնք առատորեն ցրված են շաբաթաթերթում: Խելոք Դավթին վերագրվող գրույցների շարքը խնամքով հավաքվել է, ենթարկվել գրական մշակման և տրվել հայ ընթերցողին¹³: «Արարատի» էջերում անհամեմատ մեծ տեղ է նվիրվել բանաստեղծություններին, Թերթն ունի իր բանաստեղծները՝ Ներսիսյան դպրոցի աշակերտ Ե. Իսահակյանը, Մեյսդը, Ղ. Կարախանյանցը, աշուղ Շիրինը, Հովհ. Սայադյանցը և ուրիշներ: Երբեմն-երբեմն տպագրվում էին նաև Մսեր Մսերյանի բանաստեղծությունները:

Գ. Պատկանյանն իր թերթում տպագրել է նորնախիջևանյան իր դպրոցի աշակերտներ Ավ. Խազեղյանի, Ռ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի բանաստեղծությունները¹⁴: Ռ. Պատկանյանի «Մահ Զայրմայրա նահապետի հայոց» բանաստեղծությանն իբրև մուտք՝ Գ. Պատկանյանը ղեռնդել է Տրոյական պատերազմին և Զայրմայր նահապետին նվիրված մի ուսումնասիրություն¹⁵: Մի այլ առիթով նա հատուկ հոդված է նվիրել Հոմերոսին և փորձել ցույց տալ նրա տեղը համաշխարհային գրականության պատմության մեջ:

¹¹ Նույն տեղում, № 12, 13, 14, 17:

¹² Նույն տեղում, 1851, № 18:

¹³ Կարծում ենք, ծննդոք մտաց ժողովրդական գրույցը, որը գրի է առել վահագն Պատկանյանը, հետագայում հիմք է ծառայել «Կիկոսի մահը» հեքիաթի մշակման համար («Արարատ», 1850, № 3, էջ 47):

¹⁴ «Արարատի» էջերում տպագրվել են Միքայել Նալբանդյանի շորս բանաստեղծությունները («Ժամանակ», «Մի՛ այլ յաստեղս լուսաճաճանչ» Ուրանիա տիպասի», «Հիմարաց՝ ուսման վրա ունեցած կարծիքը», «Թերթումն հիմարական կարծեաց, զոր անմիտք ունին ՚ի վերայ ուսման»): Ռ. Պատկանյանից տպագրվել են՝ «Առավոտյան երգ շինականաց», «Համակերպություն Հորայ», «Երեկոյան երգ շինականաց», «Դամբառական» և այլն:

¹⁵ «Արարատ», 1850, № 11, էջ 161—170:

Ղ. Կարախանյանցի, Ե. Իսահակյանի և այլոց բանաստեղծությունները մանկավարժական, դիդակտիկական ուղղվածություն ունեն։ Դրանց մեջ ամենից հաճախ կրկնվող մոտիվն է՝ ժամանակը ճիշտ գնահատելու և կյանքի տարիներն անիմաստ չվատնելու փիլիսոփայությունը։ Հետաքրքրական է, որ բանաստեղծական պարոդիաների ժանրը ևս ծնունդ է առել «Արարատ»-ի թերթում։ «Բախտ» բանաստեղծության հեղինակ Ղ. Կարախանյանցն ափսոսանքով է հիշում այն ժամանակները, երբ ուսումը գնահատվում էր.

Ափսո՛ս, անցավ՝ ոսկի ամը,
Լավ պատվական՝ ուսման ժամը.
Երբ որ եկավ՝ ոսկվո ղամը,
Փախավ կորեավ՝ գիտնոց համը¹⁶։

Երևմիա Իսահակյանը «Եղծ բախտի» բանաստեղծությամբ բավական սրամտորեն ծաղրում է «Բախտի» հեղինակին.

Ով որ կառնու ուսման համը,
Հիշ չի քաշիլ ոսկվո ղամը,
Զունքի տեսնում ենք աշխարհքում,
Հարուստը գիտնոց են կարոտում¹⁷։

Գ. Պատկանյանի պարբերաթերթն ուներ և «Նորատիպ գրյանք» մատենագիտական բաժինը, որն ինչ-որ չափով փոխարինում էր գրաքննադատական բաժինին.

Մեծ է «Արարատ» շաբաթաթերթի նշանակությունը՝ հայ հասարակությանը Սայաթ-Նովայի անվան և նրա վաստակի հետ ծանոթացնելու առումով։ Պատկանյանի իր թերթի 23 և 30-րդ համարներում զետեղելով Հովհաննես Մկրտչյան-Սայադյանց բանաստեղծի մի քանի երգերը, ներկայացնում է և նրա պապին՝ «Երեմի, մեծանուն Սայաթնով բանաստեղծին» և նշում, թե այդ գերդաստանի բանաստեղծական ծառը ծաղկում է ամբողջ հարյուր տարի։ Պատկանյանը միաժամանակ հայտնում է, որ Սայաթ-Նովայի երգերը և ժողովրդի մեջ պահված ավանդությունները նրա կյանքի մասին, իրեն է տրամադրել նրա թոռը՝ Մովսես քահանան։ Այսպիսով, գրում է «Արարատի» խմբագիրը, հարյուր տարվա «արձանագրերը՝ այժմ հայտնի կան թե՛ մեր ձեռքն, և թե՛ այլ բանասիրաց ձեռքն»¹⁸։

1851 թ. Գ. Պատկանյանը հայտնում է իր ընթերցողներին, որ Սայաթ-Նովայի երգերը և նրա կենսագրությունը «շուտով ի լույս կընծայվի ազգասիրական ջանյութ, ուսումնասեր և հայրենասեր բժշկապետի Գեորգյան Ե. Հախվերդյանց, որ քանի ամաց հետ է յուր պարապյո ժամերն այն գեղեցիկ աշխատությանց նվիրելով, ժողովել է որպես այն ինքնաձեռագիր օրինա-

¹⁶ Նույն տեղում, 1851, № 19, էջ 304։

¹⁷ Նույն տեղում, № 20, էջ 319։

¹⁸ Բանասեր Արամ Ինճիկյանը բարձր գնահատելով «Արարատի» դերը արևելահայ աշխարհաբարի և աշխարհիկ գրականության զարգացման գործում, ի թիվս թերթի այլ արժանիքների, նշում է և այն, որ «Արարատում» է երևացել տպագիր առաջին խոսքը Սայաթ-Նովայի մասին («Հայ նոր գրականության պատմություն», հ. 1, Կրեան, 1962, էջ 65)։

կէն, նույնպէս և այլ տեղերէն Սայադայանց հայ բանաստեղծի աշխատութիւններն»¹⁹,

Ուշագրավ է և բանասիրական այն ճշգրտումը, որ կատարում է Ն. Յ. Տեր-Շմավոնյանցը «Բազմավէպում» տպագրված Շերմազանյանցի հոգվածի առթիվ, որով հաստատում է, թե «Թշվառութիւն սոխակի» բանաստեղծութիւնը դրել է Ալամդարյանը և ոչ թե «նախնայաց աշխատասիրութիւն է», ինչպէս ենթադրում էր Շերմազանյանցը²⁰,

Պատկանյան-խմբագիրը հավատարիմ մնալով թերթի լուսավորական ուղեգծին, «Արարատում» հետաքրքրական էջեր է տրամադրել մանկավարժութեանը, ղեկողն է բնագիտական գրույցներ, դյուրամատչելի հոգվածներ՝ նվիրված աշխարհագրութեան, ֆիզիկայի, աստղաբաշխութեան, հանքաբանութեան, մարդակազմութեան այլևայլ հարցերի։ Հրապարակել է գիտութեան նորութիւնները, հերքել հավերժահարսների, չարքերի, փերինների և այլ հավատալիքների շուրջ ստեղծված կրոնական առասպելները։ Սակայն պայքարի հիմնական սլաքը, այսուհանդերձ, նա ուղղել է դպրոցական հին սիստեմի դեմ, երիտասարդ սերնդի դաստիարակութեանն օգնելու նկատառումներով գրել ծրագրային «Դաստիարակութիւն մանկանց»²¹ հոգվածը, որն հիացմունք է պատճառում հարցադրման իր համարձակութեամբ և նպատակասլացութեամբ։ Հոգվածը հետաքրքրական է ոչ միայն ժամանակին տարածում գտած խալֆայական դպրոցական սիստեմի ամենասուր քննադատութեամբ, այլև նոր դպրոցներին առաջադրվող ծրագրով։ Նա արգահատանքով է խոսում այն բախտախնդիրների մասին, որոնք տասնյակ դռքաններում և մասնավոր տներում մանուկներին հավաքած «կամ Սաղմոսի վերա գիր կապել, կամ ժամագրքի փոխերն» են սովորեցնում։ Մնողները չպետք է թույլ տան նման խաբեբաներին՝ մանուկների դաստիարակութեան գործը վերցնել իրենց ձեռքը, «որովհետև վատ դաստիարակութիւնը կարող է մեկ բովանդակ հասարակութիւն ապականել, որ եթէ լավ մտածելու լինինք, քան զամեն քրեական հանցանս մեծ է և աններելի»²²։ Իր ընթերցողներին զգաստացնելու համար Պատկանյանը դիմում է հիպերբոլիկ արտահայտութիւնների, ցույց տալիս հասարակութեանն սպառնացող վտանգի մեծութիւնը, եթե ժամանակին պայքար չտարվի կրթական այդ սիստեմի դեմ։ Այնուհետև, նա ընթերցողներին խորհուրդ է տալիս մանուկների ուսման գործը վստահել միմիայն մանկավարժական կրթութիւն ստացած անձանց և նշում է մի շարք մեթոդական ցուցմունքներ, որոնք մշակվել էին նրա՝ տարիների մանկավարժական գործունեութեան ընթացքում։

Պատկանյանի թե՛ մանկավարժական, և՛ թե՛ ժուռնալիստական գործունեութիւնը ծառայում էր հայ ազգի ինքնաճանաչութեան արթնացման նպատակին։ XIX դ. համարելով լուսավորութեան ու ազգերի ազատ զարգացման մի ժամանակաշրջան, նա ջանում էր հայութեանը նույնպէս հաղորդակից դարձնել ժամանակի առաջընթաց շարժմանը։ «Պարզորոշ տեսնելով «ամենայն իրաց և հանգամանաց փոփոխութիւնը», — գրում է բանասեր Ե. Նա-

19 «Արարատ», 1851, № 30, էջ 477:

20 Նույն տեղում, № 23, էջ 362—364:

21 Նույն տեղում, № 27, 29:

22 Նույն տեղում, № 27, էջ 423:

զարյանը, — ազգերի նոր կյանքի, առաջադիմության համար ստեղծված պատմական նախադրյալները, Գ. Պատկանյանը կրթոտ կերպով պայքարում է հայ ազգի կազմավորման, նրա առաջադիմության ճանապարհին ծառացած խոչընդոտների դեմ»²³,

Լինելով ժամանակի խոհուն մտածողներից մեկը, նա հայ ազգի առաջընթացի և լուսավորության հաղթանակի երաշխիքը տեսնում էր ոռու մեծ ժողովրդի հետ նրա ունեցած սերտ կապի մեջ: Պատկանյանը բազմիցս ընդգծել է Ռուսաստանի հետ Կովկասի ժողովուրդների և, մասնավորապես, հայերի կապի պատմական խոշոր նշանակությունը: Ռուսաստանի հետ Հայաստանի միացման իրողության խոր գնահատականը, այլևայլ հողվածներից բացի, նա տվել է ծավալուն մի հողվածում, որը կրում է «Բարեբախտությունն այժմյան հայոց ազգի ընդ հովանյալ Ռուսաց տերության» խորագիրը²⁴: Սա մի տեսություն է՝ նվիրված ինքնաճանաչության փուլը ոտք դրած հայ ազգի անցած պատմությանը և ներկա վիճակին: Հայերը կորցնելով իրենց պետականությունը, դարեր շարունակ, առանց հույսի ու հեռանկարի, դեգերել են խավարում, դրում է Պատկանյանը: Սակայն վրա են հասնում նոր ժամանակներ և Ղրիմի ու Վրաստանի ժողովուրդների բախտավորությունից հետո Հայաստանի մի մասն ու էջմիածինը նույնպես միանում է Ռուսաստանին: Ռուսաստանը լուսավորության հնարավորություն տրամադրեց հայերին, և լազարյան ճեմարանն ու Ներսիսյան դպրոցն այդ հնարավորության արդյունքն են:

Պատկանյանն ընդգծում էր հայ ժողովրդի ոռուսական կողմնորոշման խոշոր նշանակությունը. «Մեր հնագույն ժամանակի կաթողիկոսունք, որ ցանկանում էին հայոց ազգին հանձնել Ռուսաց տերության խնամոց ներքո, յուրյանց ցանկության կատարումն տեսան սրբազան Հովսեփա երկայնաբազուկ Արղուսյանց Ռուսաստանի առաջնորդությանց ժամանակն, այն օրեն հետո՝ օրրստօրէ տերության խնամքն առատացավ մեր ազգի վերա: Այժմյան մեր ազգը՝ յուր այժմյան ընդհանուր բարեբախտությունն տեսնելով՝ պարտավոր է ամենայն օր, ամենայն տեղ, յուր հոգվո ջերմեռանդությամբ ասելու կեցցե՝ Ռուսաստան»²⁵:

«Արարատի» պատմության համար խիստ հետաքրքրական է այս հողվածի ունեցած արձագանքը: Այսպես, բնութագրելով իր ժամանակի հայ պարբերականները, Մխիթարյանների «Եվրոպա» շաբաթաթերթի խմբագրությունը «Արարատի» մասին խոսելիս առանձնահատուկ ուշադրություն է նվիրում Ռուսաստանում հայության վիճակին նվիրված հողվածներին և գրեթե կրկնում է «Արարատի» վկայակոչումներն ու եզրահանգումները: «Ռուսական Հայաստանի լերանց վրա և անտառացը մեջ ամենայն հարստությամբ առանձին ճամբորդություն ընող մարդուն կողոպտվիլն այնպես սակավադեպ է, ինչպես Արևմտյան Ասիայի ավազակուտ տեղերեն առանձին մարդու կամ քիչժոր մարդիկներու անվնաս պրծնիլը»²⁶:

Կրագրական իր կարճատև գործունեության ընթացքում Գաբրիել Պատկանյանը դրսևորել է մասնագետ-խմբագրի անբասիր կարողություններ:

²³ «Հայ նոր դրականության պատմություն», հ. 1, էջ 508:

²⁴ «Արարատ», 1851, № 19, էջ 289—292:

²⁵ Նույն տեղում, էջ 292:

²⁶ «Եվրոպա», 1851, № 20, էջ 78:

Մեկընդմիջ ճշտելով թերթի ուղղությունը, նա խմբագրական գործը կազմակերպում էր այնպես, որ «Արարատում» զետեղվելիք բոլոր նյութերն՝ օժանդակելին թերթի գաղափարական գծի հաստատմանն ու պրոպագանդանը:

«Արարատը» կանոնավոր լույս է տեսել 1850 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1851 թ. ապրիլի վերջը, թվով 33 համար: Շաբաթաթերթն ուներ ներքին և արտաքին լուրերի, պատերազմական անցողարձի, աղագյին, բանասիրության, եղանակի տեսության, առևտրական ծանուցումների բաժիններ. ընդունվում էին նաև հայտարարություններ (չորս տառը մեկ կոպեկ արժողությամբ): Պետք է ենթադրել, որ թերթը դժվարությամբ էր տարածվում, որովհետև խմբագիրը խոստանում էր «Արարատը» ձրի ուղարկել նրանց, ովքեր վեց բաժանորդ կգտնեին: Շաբաթաթերթը խմբագրվում էր խնամքով, ուներ լեզվական բարձր կուլտուրա, նկարագրող էր 25-րդ համարից խմբագիրն ընդարձակում է լուրերի բաժինը և արտասպություններ կատարում ժամանակի ռուսական լրագրերից: Նա միաժամանակ տեղեկություններ էր զետեղում գյուտների և հայտնագործությունների վերաբերյալ²⁷: «Արարատը» մասնավորապես ճանաչողական մեծ արժեք է ներկայացնում իբրև ժամանակի Թիֆլիսի հայ իրականության արտացոլման սկզբնաղբյուր:

Հրատարակված նյութերից պետք է ենթադրել, որ խմբագիրն զգալի աշխատանք է տարել թղթակիցների գտնելու ուղղությամբ. այս տեսակետից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Ռափայել Պատկանյանի և Նկատերինգրադի բնակչուհի, հայազգի Լուսյա Պետրաշկոյի նամակագրությունը: Պետրաշկոյն «Արարատի» խմբագրին էր ուղարկել իր տատիկի՝ Խասպեքեյի Արմավիրի եկեղեցու այրվելու առիթով գրած բանաստեղծությունը: «Դիպվածը հաջողակ համարելով», Ռ. Պատկանյանը Պետրաշկոյին հանձնարարում է գրել և մի հոդված՝ Արմավիր քաղաքի հիմնադրման մասին: Ստանալով այդ, Պատկանյանները տպագրում են և՛ հոդվածը, և՛ բանաստեղծությունը:

Հայր և որդի Պատկանյանների խմբագրական աշխատանքի մասին գաղափար կազմելու համար, ծանոթանանք նրանց թղթակցուհու նամակին. «Դուք ինձ ասում եք, սիրեցյալ եղբայր, որ ես իմ պարապո ժամերիս մեկ մասը ընծայեմ իմ սիրական ազգիս և նորա հարազատ «Արարատ» որդվոյն: Ա՛խ, ո՞րչափ երջանիկ կհամարեի ես ինձ, եթե այնքան տեղյակ լինեի իմ սիրական հայկազյան լեզվին, որ կարողանայի ընծայել պարապո ժամերիս ո՛չ թե մեկ, այլ ամեն մասը իմ ազգին և նորա «Արարատին»²⁸: Նույնչափ խոսուն է և պաթետիկ Ռ. Պատկանյանի գրած ծանոթագրությունն այդ նամակին:

Գ. Պատկանյանը մեծ ուշադրությամբ է հետևել հայ լրագրական աշխարհին, անկեղծորեն ողջունել նոր թերթերի ծնունդը, կոչ արել հայերին՝ խրախուսել հայ խմբագիրներին: Նա գնահատել է «Նվրոպա» շաբաթաթերթի արժանիքները (հարուստ բովանդակությունը, մաքուր տպագրությունը, տա-

²⁷ Պատկանյանը 1851 թ. կենտրոնական թերթերից արտատպել է մի հաղորդում՝ Մոսկվայի արվեստագետների կողմից ռուս խոշոր փորագրիչ Ֆ. Իորդանին և Հ. Ալվազովսկուն ցույց տրված մեծարանքի մասին («էդ ուսլաբ իրանց ճառերումը շատ գովասանք են տվել Իորդանին և մեր Ալվազովսկիին: Մեծ պարծանք է, ասել են՝ ոուսաց ազգի համար, էդպես արվեստագետ ունենալ, ինչպես որ Ալվազովսկին է. և խմել են նորա կենացը» («Արարատ», 1851, № 31, էջ 482):

²⁸ «Արարատ», 1851, № 26, էջ 406:

ռերի գեղեցկությունը) և իր ընթերցողներին այդ թերթի պոլիգրաֆիական կատարելությունը ցուցադրելու համար, արտատպել է 1850 թ. նոր տարվա առթիվ «Եվրոպայում» տպագրված հայ ժողովրդին ուղղված ձոնը, որը շաբաթաթերթ էր նոր, գեղեցիկ տառատեսակով:

«Արարատն» էլ իր հերթին տարածանացել է ժամանակի պարբերականների ուշադրությունը: «Եվրոպայի» խմբագրությունն այն անվանում է հայության մեկ մեծ մասին մտավոր ազնվության գործիքը», որը ոչ միայն տեղի հայության կյանքն էր լուսաբանում, այլև «աշխարհաբարին այլևայլ ոճերն ու ասացվածքները հրատարակելով՝ հայերեն լեզվին զարդն ու հարստությունը» ավելացնում²⁹: Արևելահայ գործիչներից մոսկովաբնակ Գ. Փիթոյանը շնորհակալություն է հայտնում Պատկանյանին, որ նրա թերթը իր բարձրացրած հարցերով ներդաշնակում է օրվա լուսավորական շարժմանը: Դրա ամենամեծ օգուտը համարում է այն, որ «Արարատը» պարզ, կենդանի աշխարհաբար լեզվով է խոսում, և էնպես բաների վերա է խոսում, որը կարող է հասկանալ առհասարակ ամենայն հայ³⁰, Լ. Պետրոսյանը շնորհակալություն է հայտնում արժանապատիվ տեր-Գաբրիել քահանային, որ յուր մատաղահաս «Արարատը» խոսեցնում է այնպիսի պարզ, «խստակ լեզվով» և այնպիսի հարցերի մասին, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացնում³¹: Որ ժամանակահիցքները լիովին գիտակցում էին պարբերականի կատարած նշանակությունը, այդ երևում է և այն փաստից, որ Պատկանյանի թաղման ժամանակ արտասանած իր դամբանականում Պետերբուրգի ուսանողներից մեկը նրան, ամենայն իրավամբ, համարում է «ռուսահայոց աշխարհաբար լրագրի հիմնադիրը»³²:

Անկախ այն բանից, որ Պատկանյանի կյանքի ծանր հանգամանքները նրան հետազայում հնարավորություն չտվեցին ծավալել սկսած արգասավոր գործունեությունը և նույնիսկ իր գրական ստեղծագործության մեջ նա միշտ չէ, որ հավատարմությունը պահպանեց աշխարհաբարի նկատմամբ, բայց այն, ինչ նա կատարել է խմբագրելով «Արարատը», անվերապահորեն արժանի է սերունդների երախտագիտության:

«Արարատն» իր գոյությունից քաղաքացիական իրավունք էր տալիս աշխարհաբար լեզվին և այն դարձնում ազգային կյանքի զարթոնքի դարաշրջանում ազգը լուսավորելու միջոց: Պատկանյանն ստեղծեց հրապարակախոսական խոսքի կուլտուրա, արևելահայ ընթերցողներին մոտեցրեց գրականությանն ու գիտությանը:

ЕЖЕНЕДЕЛЬНИК «АРАРАТ»

М. А. МХИТАРЯН

Резюме

Еженедельник «Арабат» издавался в Тифлисе в 1850—1851 гг. под редакцией одного из лучших педагогов своего времени Габриела Патканяна.

²⁹ «Եվրոպա», 1851, № 9, էջ 35:

³⁰ «Արարատ», 1851, № 22, էջ 352:

³¹ Նույն տեղում, № 26, էջ 406:

³² «Լուսա», 1909, № 4, էջ 43:

Паткапяи одним из первых осознал необходимость просвещения народа и смело поднял знамя борьбы против косности и невежества в армянской действительности. Считая своей целью просвещение армянского народа, он впервые в восточноармянской действительности начал издавать журнал на разговорном языке народа — ашхарабаре.

Большую роль сыграл журнал в деле распространения новой армянской литературы, развития армянской научной педагогической мысли.